

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բուլղարահայ Թեմական պատգամավորական չորրորդ ժողովը տեղի ունեցավ 31 մարտ 1963-ին, կիրակի օրը, Պլովդիվի մեջ։

Պատգամավորական ժողովին ներկա էին Թեմի բոլոր եկեղեցական վարչություններու ներկայացուցիչները թվով 20 հոգի և յոթը քահանա հայրեր, ինչպես նաև Թեմական խորհուրդի անդամները։

Առավոտուն տեղվույն Ս. Գևորգ եկեղեցվույն մեջ հանդիսավոր հոգեհանգիստ կատարվեցավ, Թեմական առաջնորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանի նախագահությամբ, ի հիշատակ անցնող չորս տարիներու ընթացքին վախճանած Տ. Կարապետ Ներոնյան (Սլիվեն), Տ. Հմայակ Զարդարյան և Տ. Աթանաս Խաչատուրյան քահանա հայրերու և Թեմական խորհուրդի անդամ Լ. Մեծատուրյանի, ինչպես նաև Պլովդիվի եկեղեցական վարչության ատենապետ Գ. Կարապետյանի և Սոֆիայի եկեղեցական վարչության անդամ Ֆլորա Սարաֆյանի։

Արարողություններու ավարտումեն հետո, կարդացվեցավ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի սրբատառ կոնդակը, որով ավագությունի պատիվ և քահանայական լանջախաչ կրելու իրավունք կշնորհվեր Խասկովո քաղաքի հոգեվոր հովիվ արժանապատիվ Տ. Նահապետ քահանա Գարայանին։

Հետո եկեղեցական թափորը, պատգամավորները և հյուրերը ուղղվեցան եկեղեցվո շրջափակին մեջ գտնված հայ մշակույթի պատշաճորեն զարդարված սրահը, ուր տեղի ունեցավ պատգամավորական ժողովի բացումը։

Թեմական բարեխնամ առաջնորդը իր բացման ճառին մեջ վեր հանեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո դերը խաղաղության պայքարին մեջ և Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Կաթողիկոսի անխոնջ ջանքերը խաղաղության համաշխարհային խորհրդի բազմաթիվ ժողովներուն մեջ։ Առաջնորդ հայր սուրբը շնորհակալություն հայտնեց Բուլղարիո Ժողովրդական Հանրապետության կառավարության՝ Հայ Եկեղեցվո հանդեպ ցույց տված բարյացակամ վերաբերմունքին համար ու մաղթանքներ ըրավ Բուլղարիո և Հայաստանի վերելքին համար։

Ժողովի դիվանի անդամ ընտրվեցան Ս. Ալթունյան (Պլովդիվ) և Հ. Արելյան (Ռուսե) որպես նախագահներ, իսկ քարտուղարներ՝ արժանապատիվ Տ. Վահան Խաչակիր ավագ քահանա Փափազյան (Սոֆիա) և Ե. Հաճոլյան (Վառնա)։ Ընտրվեցան նույնպես լիազորություններու ստուգման, բանաձևերու և ընտրական հանձնախմբեր։

Թեմական խորհուրդի ատենապետ պր. Ռ. Մեստուճյան հանդես եկավ խնամված զեկույցով մը, կանգ առնելով Թեմական խորհուրդի ավելի քան չորս տարվան գործունեության վրա։ Ներկաներուն վրա խոր տպավորություն գործեց զեկույցի վերլուծական և կուռ բովանդակությունը։

Թեմական խորհուրդի ֆինանսական գործունեության մասին զեկուցում տվավ քննիչ հանձնախմբի անդամ պր. Ե. Սարաֆյան։

Զուլգ զեկուցներու մասին ծավալուն արտահայտություններ ըրին պատգամավորները, շինիչ թելադրանքներ ընելով թեմի հետագա գործերուն շուրջ։ Ժողովը ընդունեց բանաձև մը, որով իր գնահատանքը կհայտնե թեմական խորհուրդի աշխատանքներուն մասին։

Պատգամավորական ժողովի կողմե հեռագիրներ ուղղվեցան Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետին իր հայրական հոգածության համար և թեմիս հավատացյալներուն ողիական հավատարմությունը անգամ մը ևս շեշտելով հանդեպ էջմիածնի լուսավորչահիմն Մայր Աթոռի արժանընտիր Գահակալին։

Քննիչ հանձնախմբի անդամ ընտրվեցան պր. պր. Մ. Մարթայան, Ե. Սարաֆյան և Կ. Մինասյան։

Երևկոյան, Պլովդիվի եկեղեցական վարչությունը, նույն սրահին մեջ, հացկերույթ տվավ ի պատիվ պատգամավորական ժողովի անդամներուն։ Ջերմ մթնոլորտի մեջ բաժակներ պարպվեցան ի պատիվ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին, առաջնորդ հայր սուրբին և թեմի հոգևոր դասուն։

Նորընտիր թեմական խորհուրդը, պատգամավորական ժողովի բանաձևը աչքի առաջ ունենալով, ձեռնարկեց աշխատանքի։ Անոր կարևորագույն առաջադրանքն էր եկեղեցական վարչություններու ընտրությունները, որոնք տեղի ունեցան անցնող երկու ամիսներու ընթացքին ու ներկայիս թեմի բոլոր եկեղեցիները ունին իրենց ղեկավար մարմինները։

Բուլղարիո հայոց թեմը, առաջնորդ հայր սուրբի գլխավորությամբ, կշանա հասնիլ թեմի հավատացյալներու հոգևոր մատակարարության և եկեղեցիներու պայծառության գործին։

ԹՂԹԱԿԻՑ



Ռումինիայի և Բուլղարիայի առաջնորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը Բուլղարիայի թեմի քահանայից դասի հետ։

Օրակարգի վերջին կետին անցնելով, ժողովը միաձայնությամբ վերընտրեց առաջնորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը։ Միաձայնությամբ թեմական խորհուրդի անդամ ընտրվեցան պր. պր. Ռ. Մեսուճյան (ատենապետ), Հ. Պալյան (փոխատենապետ), Մ. Ռեթեոսյան (ատենադպիր), Օ. Քյուրդյան (գանձապահ) և Ս. Հովհաննեսյան, ինժեներ Լ. Քեշիշյան, Գ. Ասլանյան (Սոֆիա), ինչպես նաև Լ. Աբգարյան (Պլովդիվ) և Հ. Աբելյան (Ռուսե)՝ խորհրդականներ։